



ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀԻ ԺԱՄԱՆԱԿ. ՊԱՇՏՊԱՆԵՔ ՁԵՉ

ԵԹԵ ԾԽԻ ՀՈՏ ԵՔ ԱՌՆՈՒՄ ԿԱՄ ՏԵՍՆՈՒՄ ՄՈՒԽԻՐ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀԻ ՊԱՏՃԱՌՈՎ, ՏԵՍԵՔ ՀԵՏՆՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ՁԵՐ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀԻ ՊԱՇՏՊԱՆՔ



Մնացեք տան ներսում՝ փակ պատուհաններով և դռներով, կամ փնտրեք այլընտրանքային ապաստան:

Խուսափեք ամբողջ տան համար նախատեսված օդափոխիչ կամ արտաքին օդի ներքաշմամբ հովացուցիչ օգտագործելուց:



Խուսափեք ինտենսիվ ֆիզիկական ակտիվությունից:



Եթե պետք է դրսում գտնվեք ծխի պայմաններում, երկար մի մնացեք և օգտագործեք միանգամյա օգտագործման դիմակ (N-95 կամ P-100):



ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀԻ ԺԱՄԱՆԱԿ




Միացրեք ձեր օդորակիչը, եթե ունեք, հաճախ փոխեք ձեր զտիչը (MERV 13+) կամ գործարկեք շարժական HEPA մաքրիչ:



Խուսափեք ներսում կամ դրսում փայտ այրող սարքեր, այդ թվում՝ բուխարիներ, ու մուների և անուշահոտությունների նման այրման աղբյուրներ օգտագործելուց:



Անտառային հրդեհների ծուխը կարող է հանգեցնել օդի՝ առողջության համար վտանգավոր որակի, նույնիսկ հրդեհից շատ կիրումները հեռու տարածքներում: Ծխի պայմաններն արագ փոխվում են, ուստի ստուգեք ձեր օդի որակը՝ օգտագործելով South Coast AQMD հավելվածը կամ AQMD.gov-ի մեր ինտերակտիվ քարտեզը: Տարեցները, փոքր երեխաները, հղի կանայք և սրտի կամ թոքերի հիվանդություններով (օրինակ՝ ասթմա) ունեցող անձինք կարող են հատկապես զգայուն լինել անտառային հրդեհների ծխից առաջացող առողջական վտանգներին: